

Կ Ա Ր Գ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՈՒՅՔԻ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) անցկացնելու կանոնները:

2. Մրցույթ անցկացնելու առնչությամբ առաջացող հարաբերությունները կարգավորվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ սույն կարգով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն գնումների մասին օրենսդրությամբ սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4. Պետության տիրապետությանը հանձնված գույքը (այսուհետ՝ գույք) հավատարմագրային կառավարման է հանձնվում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից սույն կարգին համապատասխան կազմակերպված մրցույթի արդյունքների հիման վրա:

5. Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու մրցույթները բաց են մրցույթի պայմանները բավարարող բոլոր անձանց համար:

6. Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու համար մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով:

7. Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու հետ կապված գործառույթներն իրականացնում են մրցութային հանձնաժողովները, որոնք ձևավորվում են Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից:

8. Մրցույթի մասին հայտարարությունը մրցույթին մասնակցելու համար հայտերի ընդունման օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ պարտադիր տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական ինտերնետային կայքում և տեղեկագրում:

9. Մրցույթի մասին հայտարարության մեջ և հրավերում գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված տեղեկություններից բացի նշվում են՝

1) գույքի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ գույքի տեսակը, գտնվելու վայրը, սեփականատերը.

2) հավատարմագրային կառավարման ծրագրին ներկայացվող պահանջները.

3) գույքին առնչվող դատական գործերի վերաբերյալ տեղեկություններ:

10. Սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող հավատարմագրային կառավարման ծրագիրը պետք է ներառի՝

1) առաջարկություններ գույքի կառավարման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների, դրանց կատարման ժամկետների, պահանջվող ֆինանսական միջոցների և աղբյուրների վերաբերյալ.

2) տեղեկություններ անձի տեխնիկական և մասնագիտական ապահովվածության մասին.

3) առաջարկություններ հավատարմագրային կառավարչի վարձատրության չափի վերաբերյալ.

4) մրցույթի այլ պայմանների վերաբերյալ առաջարկություններ:

11. Անցկացվող մրցույթի շրջանակներում ներկայացված հայտերը բացվում, գնահատվում և արդյունքներն ամփոփվում են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է մրցութային հանձնաժողովի որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից:

13. Մինչև պայմանագիր կնքելը Հայաստանի Հանրապետության դատախազությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում և տեղեկագրում օրենքով սահմանված ժամկետում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

14. Հայաստանի Հանրապետության դատախազությունը գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելուն ուղղված գործողություններ:

15. Պայմանագիրը կնքելուց հետո Հայաստանի Հանրապետության դատախազությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում և տեղեկագրում օրենքով սահմանված ժամկետում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

16. Օրենքով նախատեսված հիմքերից մեկով մրցույթը չկայանալու դեպքում գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու նոր մրցույթ անցկացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ